ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԿՏՐՈՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀԱՇՎԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼԸ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՆ ՀԱՇԻՎԸ՝

Բանկում, վարկային միությունում գտնվող հաշիվ է, որի վրա սննդամթերքի կտրոններ ստացող ընտանիքը կարող է գումար պահել, որպեսզի օգտագործի այն միայն հետևյալ թույլատրելի ծախսերի համար.

- բնակության համար տուն գնելու.
- գործ սկսելու կամ
- հաշվետիրոջ կամ նրա խնամյալների ուսման կամ մասնագիտական պատրաստության: (Խնամյալներն այն անձինք են, որոնք հանդես են գալիս կամ կարող են հանդես գալ որպես խնամյալ՝ հաշվետիրոջ դաշնային եկամտահարկում):

Նախքան սահմանափակ հաշիվ բացելը ճիշտ կլինի Ձեր ձեռքի տակ Ձեր միջոցների սահմանաչափը չգերազանցող կանխիկ գումար և այլ միջոցներ (օրինակ՝ բանկային հաշիվ, անշարժ գույք և այլն) ունենալ: Ահա թե ինչու.

Եթե Դուք Ձեր սահմանափակ հաշվից/հաշիվներից վճարեք արտակարգ իրավիճակներում պահանջվող ծախսերի համար, եթե անգամ դրանք մահվան կամ կյանքին վտանգ սպառնացող իրավիճակում պահանջվող ծախսեր են, այդ հանումը կկատարվի Ձեր միջոցների $2,000 կամ $3,000 (եթե Ձեր ընտանիքում հաշմանդամ կամ 60 տարեկան կամ դրանից ավելի տարեց առնվազն մեկ անձ կա) սահմանաչափի հաշվին:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀԱՇՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- Հաշիվը բացելու պահին Դուք պետք է սննդամթերքի կտրոնների նպաստ ստանալիս լինեք:
- Թույլատրվում է ունենալ մեկից ավելի սահմանափակ հաշիվ:
- Սահմանափակ հաշվի վրա պահվող խնայողությունների առավելագույն սահմանաչափ գոյություն չունի:
- Բոլոր սահմանափակ հաշիվների վրա եղած գումարները չեն ազդում Ձեր ընտանիքի միջոցների սահմանաչափի վրա:
- **Նախքան** որևէ հաշիվ Սահմանափակ հաշիվ կհամարվի, Դուք պետք է «Սահմանափակ հաշվի պայմանագիր» ստորագրեք:
- Հաշվի վրա եղած գումարը կարելի է միայն թույլատրելի ծախսերի նպատակով օգտագործել:
- Սահմանափակ հաշվի/հաշիվների վրա եղած գումարը և դրա վրա ավելացած տոկոսները պետք է այլ հաշիվներից **առանձին** պահվեն:
- Սահմանափակ հաշվի/հաշիվների վրա գոյացած տոկոսները պետք է դրվեն ուղղակի այդ հաշվի/հաշիվների վրա:
- Յուրաքանչյուր Սահմանափակ հաշվի համար Դուք պետք է առանձին «Սահմանափակ հաշվի պայմանագիր» ստորագրեք:
- Եթե Դուք սահմանափակ հաշիվ ունեք և դադարում եք սննդամթերքի կտրոնների նպաստ ստանալ, ապա գումարը կարող է հանվել Ձեր սեփականությունից և միջոցներից, եթե կրկին դիմեք նպաստ ստանալու համար:

ՀԱՇՎԻՑ ՀԱՆՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑԵԼԸ

- **Եռամսյա հաշվետվություններ ներկայացնող ընտանիքները**
  - Եռամսյակի ընթացքում հաշվից հանվող գումարների մասին հարկավոր չէ զեկուցել մինչև եկամուտի մասին Ձեր հաջորդ հաշվետվությունը ներկայացնելը:
  - Եռամսյա հաշվետվությունը ստանալիս շրջանը կվերագնահատի Ձեր ունեցած միջոցները և կորոշի, թե արդյոք հաշվից հանված գումարը թույլատրելի ծախսի համար է եղել: Եթե Ձեր ունեցած միջոցները միջոցների սահմանաչափից ($2,000/$3,000) ցածր լինեն, Դուք կշարունակեք նպաստներ ստանալու իրավունք ունենալ, եթե այլապես ունեք այդ իրավունքը:
- **Փոփոխության դեպքում հաշվետվություն ներկայացնող ընտանիքները**
  - Ձեր Սահմանափակ հաշվից հանված գումարի մասին անհրաժեշտ է զեկուցել գումարը հանելու օրվանից հետո 10 օրվա ընթացքում:
  - Ձեր հաշվետվությունից հետո 10 օրվա ընթացքում շրջանը կստուգի Ձեր ունեցած միջոցների սահմանը:
  - Ձեր իրավասության շարունակման հարցը կախված կլինի հաշվից գումար հանելու պատճառից:
  - Եթե Ձեր ունեցած միջոցները միջոցների սահմանաչափից ($2,000/$3,000) ցածր լինեն, Դուք կշարունակեք նպաստներ ստանալու իրավունք ունենալ, եթե այլապես ունեք այդ իրավունքը:

ԾԱԽՍԵՐԸ

- **Բնակության համար տուն գնելը**

  Դուք կարող եք Սահմանափակ հաշվի վրա եղած միջոցները ծախսել՝
  - գրավագումարի, վճարումների, կանխավճարների, հիմնագումարի վճարման նպատակով.
  - գնվող տան գնի մեջ չմտնող ծախսերը վճարելու նպատակով.
  - վերանորոգման և տան անբաժանելի մասը կազմող հարմարանքներ ձեռք բերելու և տեղադրելու նպատակով:

  Դուք չեք կարող Սահմանափակ հաշվի վրա եղած միջոցները ծախսել՝
  - կահույք գնելու նպատակով.
  - կենցաղային ապրանքներ գնելու նպատակով:
- **Հաշվետեր(եր)ի և նրա(նց) խնամյալ(ներ)ի ուսումը կամ մասնագիտական պատրաստությունը**

  Դուք կարող եք Սահմանափակ հաշվի վրա եղած միջոցները ծախսել՝
  - վարձավճարների, ուսման վարձի, գրքերի, գրենական պիտույքների, սարքավորման, հատուկ համազգեստների գնման նպատակով.
  - աշակերտների կամ ուսանողների բնակվարձի կամ սննդի համար վճարելու նպատակով.
  - դպրոց/տեխնիկական ուսումնարան գնալու և վերադառնալու ճանապարհածախսը վճարելու նպատակով.
  - դպրոց հաճախելու համար անհրաժեշտ՝ երեխայի խնամքի համար վճարելու նպատակով:

ԾԱԽՍԵՐԸ՝ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

- **Նոր գործ սկսելը**

  Դուք կարող եք Սահմանափակ հաշվի վրա եղած միջոցները ծախսել՝
  - արտադրական սարքավորումների գնման, վերանորոգման և տեխնիկական սպասարկման նպատակով.
  - գործիքներ, համազգեստ, այլ պաշտպանական կամ պահանջվող հագուստ և կոշիկներ ձեռք բերելու նպատակով.
  - ձեռնարկության ակտիվների և երկարատև օգտագործման ապրանքների համար վերցված փոխառության հիմնագումարը և տոկոսները վճարելու նպատակով.
  - գրասենյակի կամ տարածքի վարձակալության և կոմունալ վճարումների նպատակով.
  - աշխատակիցների աշխատավարձերը վճարելու նպատակով.
  - պաշարների, բեռնառաքման և առբերման ծախսերը վճարելու նպատակով.
  - գործի հետ կապված վարձավճարների, հարկերի, հաշվապահական հաշվառման կամ գործի հետ առնչվող այլ ծախսերի համար վճարելու նպատակով:

  Դուք չեք կարող Սահմանափակ հաշվի վրա եղած միջոցները ծախսել՝
  - անձնական ծախսերի, օրինակ՝ ժամանցի համար վճարելու նպատակով:

ԱՊԱՑՈՒՅՑԸ

Սահմանափակ հաշիվ բացելիս և Սահմանափակ հաշվից/հաշիվներից գումար հանելիս Դուք պետք է ապացույց ներկայացնեք շրջանին.

- **Ստորև բերված են ծախսի մասին տեղեկության և/կամ հաշվից գումար հանելու ապացույցի որոշ օրինակներ.**
  - հաշվեգրքույկ, բանկի քաղվածք կամ բանկից, վարկային միությունից ստացած փաստաթուղթ, որի վրա նշված են բանկի անվանումն ու հասցեն, հաշվի/հաշիվների անուն(ներ)ը, հաշվի/հաշիվների համար(ներ)ը և
  - Սահմանափակ հաշվի պայմանագիրը ստորագրելու օրվանից հետո ստացված բոլոր հաշվեկշիռները և գործարքները:
- **Ստորև բերված են այն բանի ապացույցի որոշ օրինակներ, թե ինչ կերպ եք Դուք ծախսել գումարը.**
  - չեղարկված վճարագիր.
  - ապրանք կամ ծառայություն տրամադրողի կողմից ստորագրված փաստաթուղթ, որի վրա նշված է, թե ինչի համար և որքան գումար է վճարվել.
  - ստացական.
  - Սահմանափակ հաշվի հաշվեկիռը ցույց տվող՝ բանկի քաղվածքը: